

LUSINE GRIGORYAN

English 7

Մեթոդական ուղեցույց



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 000
ԳՄԴ 000
Գ 000

Գրիգորյան Լուսինե
Գ 000 ԱՆԳԼԵՐԵՆ: 7-րդ դասարան: Մեթոդական ուղեցույց /
Լ. Գրիգորյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 80 էջ:

ՀՏԴ 000
ԳՄԴ 000

ISBN 978-9939-99-000-0

© Լ. Գրիգորյան, 2023
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

7-րդ դասարանների աշակերտներն արդեն ունեն որոշակի փորձ և գիտելիքների պաշար, ուստի լեզվի ուսուցումն այս փուլում կազմակերպելիս պետք է հաշվի առնել այդ տարիքի սովորողներին բնորոշ առանձնահատկություններն ու նրանց նախասիրությունները: Հիմնական շեշտը պետք է դրվի աշակերտների ինքնուրույն աշխատելու կարողությունները խթանելու, նրանց մեջ ձևավորված հմտություններն ու ունակությունները ստեղծագործաբար օգտագործելու վրա: Անհրաժեշտ է հասնել նրան, որ նրանք ինքնուրույն ըմբռնեն տեքստերի բովանդակության հիմնական իմաստը և այն կարողանան ընդհանրացնել: Ուսուցման այս փուլում չափազանց կարևոր է զարգացնել աշակերտների թե՛ գրավոր, թե՛ բանավոր հմտությունները, նրանց տալ ավելի շատ գիտելիքներ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի պատմության և մշակույթի վերաբերյալ:

Նյութը մատուցելիս չափազանց կարևոր է, որ ուսուցիչը ցուցաբերի ստեղծագործական և ճկուն մոտեցում, որոնի և գտնի մատուցման նոր ձևեր ու եղանակներ: Օրինակ՝ կարող ենք խորհուրդ տալ դասն ուսուցանելիս աշակերտներին երբեմն բաժանել զույգերի կամ փոքր ու մեծ խմբերի, երբեմն էլ դասընթացին մասնակից դարձնել ամբողջ դասարանին: Դա կխթանի աշակերտների բառապաշարի հարստացումը դիմացինի սխալները նկատելու և դրանք ուղղելու կարողությունը:

Աշակերտներն ավելի արագ և ավելի արդյունավետ են սովորում, երբ ակտիվորեն ընդգրկվում են ուսումնառության գործընթացում: Սովորելու ակտիվ ընթացքը խթանելու համար անհրաժեշտ է

- առատ գործնական աշխատանք կազմակերպել.
- հարցեր տալ, որպեսզի սովորողն սկսի մտածել.
- ժամանակ առ ժամանակ քննարկման մեթոդներ օգտագործել.
- պլանավորել ընթացիկ վարժություններ և թեսթեր.
- օգտագործել նախագծի մեթոդը և դասն ամրակայող այլ հանձնարարականներ.

Դասագիրքն ունի պարզ և տրամաբանական կառուցվածք. յուրաքանչյուր դաս ընդգրկում է խոսքային գործունեության բոլոր ձևերը՝ ընթերցանություն, բանավոր խոսք, գրավոր խոսք, ունկնդրում, թարգմանություն: Խոսքային գործունեության յուրաքանչյուր ձևին համապատասխան ընտրված են յուրահատուկ առաջադրանքներ և վարժություններ: Բոլոր առաջադրանքները հաղորդակցական ուղղվածություն ունեն: Տարբեր խորագրեր (*Grammar Spot*, *Writing Spot*, *Talking points*, *Reading Spot* և այլն) ազդարարում և ուշադրությունը սևեռում են տեքստի ընթերցանության, բանավոր և գրավոր խոսքի ուսուցմանը, ինչպես նաև քերականության կրկնությանը կամ քերականա

կան նոր նյութի ուսուցմանը: Ընթերցանության տեքստերը ընտրված են տարբեր աղբյուրներից՝ գեղարվեստական գրականություն, ամսագրեր ու թերթեր և այլն: Տեքստերի ընտրությունը կատարված է այն սկզբունքով, որ դրանք ոչ միայն հնարավորինս բազմազան և կարևոր տեղեկություն հաղորդեն աշակերտին, այլև զարգացնեն տեքստն արագ, վարժ կարդալու և ընկալելու նրանց ունակությունները (*scimming, scanning and prediction*): Դասագիրքն ունի հավելված, որտեղ քերականությունը տրվում է գծագրերի տեսքով. քերականական այս կամ այն միավորը մոռանալու դեպքում աշակերտը կարող է դիմել այդ գծագրերին և վերհիշել մոռացածը:

Դասագրքին կից առցանց տրվում են ձայնային նյութեր ունկնդրելու հմտությունների ձևավորման և զարգացման համար, իսկ ուսուցչի ձեռնարկի վերջում տրվում են ընթերցման համար նախատեսված համապատասխան ունկնդրելի տեքստեր, իրենց ըմբռնմանը նպաստող վարժություններով (*reading comprehension*):

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ VOCABULARY

Դասագրքում բառապաշարի ուսուցումը հիմնականում կատարվում է Word Bank խորագրի ներքո: Պարտադիր չէ, որ տրված բոլոր նոր բառերը մտնեն աշակերտի ակտիվ բառապաշար: Դա պետք է կատարվի աստիճանաբար: Տեքստային վարժություններին անցնելուց առաջ անհրաժեշտ է առաջարկել աշակերտին լսել տեքստը և փորձել գուշակել այն բառերը և արտահայտությունները, որոնք տեքստից առաջ տրվում են անգլերեն և հայերեն նշանակությունները համապատասխանեցնելու վարժությունների միջոցով (*Match the English and Armenian meanings*):

Նոր բառերը և արտահայտությունները դասագրքերում հիմնականում տրվում են յուրաքանչյուր դասի սկզբում Word Bank խորագրի ներքո և նպատակ են հետապնդում աշակերտի ուշադրությունը կենտրոնացնելու նոր բառապաշարի վրա՝ հետագա բազմազան հանձնարարությունների միջոցով ամրապնդելու նպատակով: Նոր բառեր և արտահայտություններ սովորեցնելիս անհրաժեշտ է հախ աշակերտների համար կազմել այնպիսի նախադասություններ, որոնց ենթատեքստից հեշտ կլինի կռահել անձանոթ բառի կամ արտահայտության իմաստը: Կարող եք նրանց տալ հետևյալ հարցերը. *Can you guess the meaning from the context? from its prefixes and suffixes?* և այլն: Ենթատեքստը և ընդհանուր գիտելիքները միշտ օգնում են գուշակելու անձանոթ բառի իմաստը: Կարելի է անձանոթ բառն օգտագործել այնպիսի նախադասության մեջ, որի ենթատեքստը հնարավորություն կընձեռի հեշտությամբ գուշակել այդ բառը: Օրինակ՝ *I can't use this knife. It is too blunt.*

Դասագրքերում բառապաշարի յուրացումը հեշտացնելու նպատակ են հետապնդում *Word building* և *Word knowledge* խորագրերը:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

READING

Ընթերցանությունը գիտելիքի ստեղծման հիմնական եղանակն է, դրա հիման վրա են զարգանում խոսքային մյուս հմտությունները: Ընթերցանության հանձնարարություններ տալիս, առաջին հերթին, կատարեք տրված նախաընթերցումային վարժությունները, այնուհետև անմիջական աշխատանք տարեք տեքստի հետ և ավարտեք ետընթերցումային հանձնարարություններով, որոնք միտված են ընթերցած նյութի յուրացմանը:

Մինչև ընթերցանությունն սկսելը նախապատրաստեք նոր նյութի ընկալումը: Ակտիվացրեք նյութի մասին ունեցած աշակերտների գիտելիքները և կենտրոնացրեք ուշադրությունը՝ նպատակային ընկալման համար: Աշակերտներն ամենից արդյունավետ սովորում են այն ժամանակ, երբ թեմայի մասին որոշակի նախնական գիտելիքներ են ունենում: Եթե ուսուցիչն օգնի աշակերտներին՝ պատկերացնելու այն գաղափարներն ու հասկացությունները, որոնց մասին կարդալու են, ապա ընթերցանությունն ավելի արդյունավետ կլինի: Հետևեք, որ աշակերտները ոչ միայն կարդան նյութը, այլև կիրառեն կարդացածը: Աշակերտներն այն ժամանակ են լավ սովորում, երբ դառնում են ակտիվ ու գործնական ընթերցողներ: Խորհուրդ ենք տալիս կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են օրինակ՝ բառապաշարի հարստացումը, գաղափարների մտագրոհը, քննարկումների խթանումը, գրելու խթանումը և այլն:

Ընթերցանական հմտությունները ստուգելու համար դասագրքերում հիմնականում կիրառվում են հետևյալ առաջադրանքները.

- բազմակի ընտրության առաջադրանքներ
- բաց թողնված բառերով առաջադրանքներ
- ճիշտ / սխալ
- հարց / պատասխան
- պարզ վերարտադրություն
- փոխադրություն
- տեքստի բովանդակության սխեմատիկ պլանի կազմում
- տեքստի խառը հատվածները ճիշտ հաջորդականությամբ դասավորել և այլն

Դասագրքում ընդգրկված են տեղեկատվական բնույթի տարբեր նյութեր, թուուցիկ ընթերցանության համար նախատեսված տեքստեր, որոնց հաջորդում են «Ընտրեք ճիշտ պատասխանը», «Ճիշտ, թե՞

սխալ» (*Choose the correct answer, True or False*) և այլ վարժություններ, որոնք նպատակ ունեն նպաստելու նյութի լիարժեք և ամբողջական ընկալմանը: Իսկ *What do you think?* բնույթի հարցեր տալով և հիմնվելով դասագրքում տրված *Talking points* հանձնարարությունների վրա՝ ուսուցիչն աշակերտներին կմղի արտահայտելու իրենց սեփական կարծիքը և մասնակցելու տարբեր թեմաների շուրջ քննարկումներին:

It's a long story խորագրի տակ տրվում է հայտնի անգլիական կամ ամերիկյան գրողի կրճատված և պարզեցված մի որևէ պատմվածք՝ իրեն նախորդող և հաջորդող հանձնարարություններով՝ բառապաշարն ամրապնդելու համար: Ընթերցանության համար նախատեսված տեքստերն ունեն տարբեր նպատակներ.

1. Reading for information.
2. Reading for gist.
3. Reading for discussion.

ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ/ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ SPEAKING

Բանավոր խոսքի զարգացումը տրվում է հետևյալ սկզբունքով. ստեղծել հաղորդակցության այնպիսի հիմք, որ աշակերտը կարողանա, ըստ որոշակի իրավիճակների, հանպատրաստից արտահայտվել տարբեր թեմաների շուրջ՝ մենախոսության կամ երկխոսությունների միջոցով: Աշակերտը պետք է կարողանա հստակ արտահայտել սեփական կարծիքն ու վերաբերմունքն առանձին երևույթների վերաբերյալ, դատողություններ անի և գնահատականներ տա, լուծի տեղեկատվության փոխանակման, հաղորդակցական խնդիրներ, կարողանա հարցեր տալ, պատճառաբանություններ ու հիմնավորումներ անել, խնդրել, առաջարկել և այլն: Նրան պետք է հետևողականորեն վարժեցնել երկխոսություններ և զրույցներ վարելուն, տարբեր թեմաների շուրջ քննարկումներ անցկացնելուն և այլն:

Սովորեցրեք աշակերտին մենախոսությունների և երկխոսությունների ձևով խոսակցին հաղորդել և նրանից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ՝ կիրառելով դասագրքում տրված հետևյալ բնույթի առաջադրանքները.

- հարցազրույց,
- երկխոսություն,
- թեմատիկ / իրադրային զրույց,
- մենախոսություն (ներկայանալ, պատմել, փոխադրել) տեքստի կամ նկարի շուրջ
- շնորհանդես
- դերախաղ

Չափազանց կարևոր է սովորողի մոտիվացիան. խոսելու մղող աշխատանքների համար ուսուցիչը պետք է դրդող, խոսել հրահիրող լուծումներ գտնի, ստեղծի անկաշկանդ և ոգևորող մթնոլորտ, թեմայով զբաղվելու և այն քննարկելու ցանկություն:

Հիմնվելով դասագրքում տրված լայնածավալ նյութի վրա՝ աշակերտներին սովորեցրե՞ք նկարագրել անձանց, իրեր, երևույթներ, իրադարձություններ, պատմել դեպքերի, իրադարձությունների, իր զգացմունքների մասին, տեղեկացնել, նորություններ հաղորդել, բնութագրել, դատողություններ անել, կարծիք հայտնել որևէ երևույթի, հարցի, իրադարձության մասին, հիմնավորել սեփական կարծիքը և այլն:

Օգտագործելով յուրացրած բառապաշարը, քերականական կառուցվածքներն ու խոսքային կաղապարները՝ սովորեցրե՞ք ինքնուրույն և տրամաբանորեն խոսել, հուզական և գնահատող դատողություններ անել, հիմնավորել իր տեսակետը, արտահայտել անձնական վերաբերմունքը:

ՈՒՆԿՆԴՐՈՒՄ

LISTENING

Հարկ է նշել, որ ունկնդրելուն (խոսքը վերաբերում է լսելով հասկանալուն) մեր դպրոցներում անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել: Մինչդեռ ունկնդրելու անհրաժեշտ ունակություններ չունեցող անձի համար լեզվի՝ որպես հաղորդակցման միջոցի գործածումը խիստ սահմանափակ է դառնում: Այս բացը լրացնելու համար դասագիրքը կից ունի առցանց ձայնային նյութեր ունկնդրելու հմտությունները ձևավորելու և զարգացնելու նպատակով: Լսելով հասկանալը ենթադրում է առնվազն հետևյալ հիմնական կարողությունները.

ա) ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի հիմնական բովանդակությունը,

բ) ունկնդրած տեքստում հասկանալ և դուրս բերել անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկատվությունը,

գ) լիակատար հասկանալ և ըմբռնել ունկնդրած տեքստի մանրամասները:

Ունկնդրման ունակություններին վերաբերող պահանջները դասարանից դասարան տարբերվում են լեզվական նյութի բարդացմամբ (թե՛ քանակական, թե՛ որակական առումով) և ընկալման պայմաններով (խոսքի արագությունը, տեսողական հենակետի առկայությունը և բացակայությունը, խոսողի ձայնի ծանոթ լինելը և այլն):

Դասագրքում *Listening Spot* խորագրի ներքո զետեղված վարժություններն ուղեկցվում են տարբեր առաջադրանքներով, որոնք հեշտությամբ կարելի է գտնել առցանց՝ հետևելով *Listening Spot* խորագրի մեջ տրված ուղեցույցին (soundtrack 1, 2, 3, etc.).

- լսել և կրկնել,
- լսել և ներկայացնել,
- լսել և լրացնել բացթողումները,
- լսել և հարցերին պատասխանել,
- լսել և վերարտադրել և այլն:

Աշակերտների մոտ անգլերենը լսելու և ընկալելու ունակությունները մշակելու, զարգացնելու նպատակով ուսուցիչներին խորհուրդ է տրվում, հնարավորության սահմաններում, ձայնագրությունների միջոցով կամ բարձրաձայն տեքստերը ընթերցելով և *Choose the correct answer, True or False* վարժությունների կամ տեքստի վերաբերյալ իրենց իսկ կազմած հարցերի միջոցով ստուգել, թե աշակերտները որքանով են ճիշտ լսել և ընկալել նյութը:

Miss Mouth խորագրի ներքո տրվում են արտասանությունը բարելավող վարժություններ՝ շուտասելուկների ձևով, ինչպես նաև լսելու և նյութը կրկնելու վարժություններ:

ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ WRITING

Օտար լեզվով գրելու հմտությունների ձևավորումը հաջորդում է ընթերցանության, ունկնդրելու և խոսելու հմտություններին: Ժամանակակից հեռահար հաղորդակցման հնարավորությունները թելադրում են, որպեսզի սովորողը տիրապետի նաև գրավոր հաղորդակցման հմտություններին: Գրավոր խոսքը, ի տարբերություն բանավոր խոսքի, ի ցույց չի դնում սովորողի ճիշտ արտասանությունը, հստակ ու սահուն խոսքը, սակայն այստեղ հաղորդակցում իրագործելուց բացի՝ կարևորվում է խոսքի կապակցվածությունը և տրամաբանական կապը, քերականական ճիշտ կառույցների կազմումը, ինչպես նաև ուղղագրությունը:

Գրավոր խոսքի ուսուցումը, թերևս միայն տարրական փուլի բացառությամբ, մեծ մասամբ ուղեկցվում է գրավոր թեստավորման նպատակների հետ: Վարժությունների գրավոր կատարումը, տարբեր տեսակի շարադրություն գրելու հանձնարարությունները հաճախ հետապնդում են խոսքային գործունեության մյուս տեսակների յուրացումը ամրապնդելու և ստուգելու նպատակներ: Ուստի, այստեղ նպատակահարմար ենք գտել միավորելու գրավոր խոսքի ուսուցման հանրակրթական խնդիրները թեստավորման հետ՝ նկատի ունենալով

նաև այն հանգամանքը, որ թեստավորումը լայնորեն կիրառվում է ամենուրեք:

Յուրաքանչյուր թեմայից սովորողների ձեռքբերումները բացահայտելու համար նախատեսվում է գրավոր աշխատանք՝ ինքնուրույն (*independent writing*) կամ ուղղորդված (*guided writing*), որի նպատակն է ուղղություն տալ աշակերտների գրելու գործունեությանը՝ օգնելով նրանց գրել ուրվագծված բառերի, տեքստի կամ նկարների միջոցով: Այն կազմված է տվյալ թեմայից սովորողներին ներկայացվող առարկայական չափորոշչային պահանջների յուրացման աստիճանը ստուգող առաջադրանքներից:

Writing Spot խորագրի նպատակն է աշակերտի ուշադրությունը հրավիրել այն հանձնարարությունների վրա, որոնց միջոցով զարգացվելու է գրավոր խոսքը: Գրավոր խոսքը նպաստում է բանավոր խոսքի, ընթերցանության կարողությունների զարգացմանը, լեզվական նյութի յուրացմանը: Աշակերտներին պետք է սովորեցնել գրավոր արտահայտել սեփական մտքերը՝ տարբեր թեմաներ շարադրելու, նամակ կամ բացիկ գրելու, ոչ ծավալուն պատմվածքներ հորինելու կամ ավարտելու ձևով՝ պատմողական տեքստը վերափոխելով երկխոսության կամ հակառակը և այլն:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ GRAMMAR

Լեզվի քերականության ուսուցումը դասագրքում նույնպես հաղորդակցական նպատակներ է հետապնդում:

Հետևյալ քայլերը կօգնեն ուսուցիչներին կազմակերպելու քերականական երևույթների մատուցումը. աշակերտներին մղել կանոնի ինքնուրույն սահմանմանը, ստուգել կատարած սահմանումն այլ օրինակների վրա, հարկ եղած դեպքում օգնել բացահայտելու բացառությունները և այլն:

Դասագրքում քերականական նյութը հիմնականում մատուցվում է զրույցների, տարբեր բնույթի քննարկումների և հաղորդակցման այլ ձևերի միջոցով: Սակայն կան նաև քերականությանը հատկացված առանձին բաժիններ՝ *Grammar Spot* և *Grammar Revision* խորագրերով: Դրանք գուցե պակաս հետաքրքրական են, քան հաղորդակցման տարբեր եղանակներով ներկայացվող վարժությունները, սակայն նույնպես ընդհանուր դասընթացի կարևոր մասն են կազմում: Միշտ պետք է հիշել, որ քերականության ուսուցումն առաջին հերթին ծառայում է միմյանց հետ շփվելու և հաղորդակցվելու խնդիրներին: *Remember, Don't Forget* կամ *Watch out* խորագրերը նպատակ ունեն

աշակերտի ուշադրությունը հրավիրելու քերականության կրկնության կամ քերականական նոր նյութի ուսուցման վրա:

Քերականության կրկնողության վարժություններն ավելի ճիշտ կլինի հանձնարարել որպես տնային աշխատանք: Այստեղ և հետագա բոլոր վարժություններից առաջ հիշեցվում է այս կամ այն քերականական կատեգորիան: Առաջարկում ենք տվյալ նյութը նախապես բացատրել մայրենի լեզվով, որից հետո միայն կարդալ և սովորել անգլերենով: Այդ հիշեցումները տրվում են *Don't forget* կամ *Remember* խորագրերով: Քերականությանը նվիրված մասում ներկայացվում են նաև բառակազմական և բառիմացության, ինչպես նաև նախադասություն կազմելու (*Word Building, Word Order, Sentence Building*) բնույթի վարժություններ: Այդօրինակ վարժությունները լուծելիս աշակերտներին պետք է առաջարկել, տրված բառերից զատ, մտածել և գտնել նոր բառեր:

Գոյական (The Noun)

Հոդ (The Article)

Որոշյալ կամ զրո հոդ՝ նյութ ցույց տվող անհաշվելի գոյականների հետ.

We can't live without water.

The water in Garni is very healthy.

Որոշյալ, անորոշ և զրո հոդ՝ վերացական գոյականների հետ.

Life is wonderful.

The life in the mountains is wonderful.

He lived a happy life.

Հետևյալ կայուն կապակցությունները՝ անորոշ հոդով.

to have a headache, to have a cold, a great deal of,

a great number

Կայուն կապակցությունները՝ որոշյալ հոդի հետ.

the day after tomorrow, on the right, on the left, on the one hand...on the other hand, the other day.

Հետևյալ կայուն կապակցություններն՝ առանց հոդի.

at first sight, by mistake, by bus, by taxi, to go to town, from shop to shop

Գոյական (The Noun)

- գոյականներ, որոնք գործածվում են միայն եզակի թվով
- գոյականներ, որոնք գործածվում են միայն հոգնակի թվով
- գոյականներ, որոնք ունեն –s վերջավորությունը, բայց գործածվում են եզակի թվով

Ածական (The Adjective)

Համեմատության աստիճաններ (Degrees of comparison):

Adjectives ending in -ed, and -ing

Adjective + preposition (interested in, fond of, good at, bad at, full of, angry with, etc.)

Մակբայ (The Adverb)

Համեմատության աստիճաններ (Degrees of comparison):

Intensifiers far, much, too, enough

Բայ (The Verb)

Անորոշ ապառնի ժամանակ (*Future Simple*), երբ այն ցույց է տալիս մի գործողություն, որը կատարվելու է ապագայում՝ անկախ որևէ մեկի կամքից:

Ներկա շարունակական (Present Continuous) ժամանակը, երբ այն ցույց է տալիս պլանավորված գործողություն ապագայում.

We are leaving for Vanadzor next Sunday.

to be going to do something արտահայտությունը գործողություն կատարելու մտադրության նշանակությամբ.

He is going to revise the new words in the afternoon.

Անորոշ ապառնի ժամանակ, երբ այն գործածվում է ժամանակի և պայմանի երկրորդական նախադասություններ ունեցող գլխավոր նախադասությունում: (Zero and first conditional)

Անորոշ անցյալ ժամանակ (*Past Simple*), անցյալ շարունակական (*Past Continuous*), when and while

Կրավորական սեռ (Passive Voice) present and past simple

Անուղղակի խոսք (Reported speech) orders and requests

Գոյականակերտ նախածանցներ, վերջածանցներ (Noun forming suffixes (-or, -er, -ish, -ion, -ment, -ness) and prefixes (dis-, un-, in-, anti-)

Մոդալ բայեր (Modal Verbs)

must, have to, should, ought to

Առաջարկում ենք բալի ժամանակաձևերն ուսուցանելիս ցույց տալ դրանց կիրառման և կազմվելու տարբերությունները հետևյալ աղյուսակների օգնությամբ:

Շեշտեր *the Simple present* և *the Present progressive*, ինչպես նաև *the Simple past*, և *the Past progressive* ժամանակաձևերի տարբերությունները:

VERB TENSES

Tense	Signal words	Use	Examples affirmative	Examples negative	Examples interrogative
Simple Present	Every day Sometimes Always Often Usually Seldom Never	something happens repeatedly how often something happens one action follows another things in general future meaning: timetables, programmes	I work He works She works It works I go He goes She goes It goes	I don't work He doesn't work She doesn't work It doesn't work I don't go He doesn't go She doesn't go It doesn't go	Do I work? Does he/she-work? It work? Do I go? Does he/she-go? It go?
Present Progressive	Now At the moment Look! Listen!	something is happening at the same time of speaking or around it future meaning: when you have already decided and arranged to do something (a fixed plan, date)	I'm working He's working I'm going He's going	I'm not working He isn't working I'm not going He isn't going	Am I working? Is he working? Am I going? Is he going?

Tense	Signal words	Use	Examples affirmative	Examples negative	Examples interrogative
Simple Past	Last... ... Ago In 1990 Yesterday	action took place in the past, mostly connected with an expression of time (no connection to the present)	I worked He worked I went He went	I didn't work He didn't work I didn't go He didn't go	Did I work? Did he work? Did I go? Did he go?
Past Progressive	While	an action happened in the middle of another action someone was doing something at a certain time (in the past) you don't know whether it was finished or not	I was working He was working I was going He was going	I wasn't working He wasn't working I wasn't going He wasn't going	Was I working ? Was he working? Was I going? Was he going?

Tense	Use	Examples Affirmative	Examples negative	Examples interrogative
will + future	<p>predictions about the future (you think that smth will happen)</p> <p>you decide to do smth. spontaneously at the time of speaking</p>	<p>I'll work</p> <p>He'll work</p> <p>I'll go</p> <p>He'll go</p>	<p>I won't work</p> <p>He won't work</p> <p>I won't go</p> <p>He won't go</p>	<p>Will I work?</p> <p>Will he work?</p> <p>Will I go?</p> <p>Will he go?</p>
going to+future	<p>when you have already decided to do smth. in the future</p> <p>what you think will happen</p>	<p>I'm going to work</p> <p>He's going to work</p> <p>I'm going to go</p> <p>He's going to go</p>	<p>I'm not going to work</p> <p>He's not going to work</p> <p>I'm not going to go</p> <p>He's not going to go</p>	<p>Am I going to work?</p> <p>Is he going to work?</p> <p>Am I going to go?</p> <p>Is he going to go?</p>

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ TRANSLATION

Թարգմանական վարժություններն առկա են դասագրքի բոլոր դասերում: Դրանք հիմնականում տրվում են դասագրքում անձանոթ անգլերեն/հայերեն բառերը և արտահայտությունները հայերենին/անգլերենին համապատասխանեցնելու՝ *Match the English and Armenian equivalents* հանձնարարությունների միջոցով:

ԹԵՄԱՆԵՐ

Դասագրքում ուսուցումը կազմակերպված է համընդհանուր եվրոպական չափանիշներին համապատասխան առանցքային թեմաների շուրջ: Թեմաները կրկնվում են տարբեր դասարաններում՝ տարեց-տարի զարգանալով, ընդլայնվելով ու խորանալով: Ըստ այդմ, խոսքային և հաղորդակցական կարողությունների զարգացման համար ընտրվող տեքստերի բովանդակությունը համապատասխանեցվում է սովորողների տարիքային առանձնահատկություններին, իսկ լեզուն՝ չափորոշիչների լեզվական պահանջներին: Դասագրքում առկա են տեղեկատվական (գովազդ, զբոսաշրջիկի ուղեցույցներ, պաշտոնական և անձնական նամակներ, կենսագրական տեղեկություններ, հարցազրույց), գեղարվեստական (հատվածներ արձակ ստեղծագործությունից, բանաստեղծություն) և քննադատական-վերլուծական տեքստեր:

Հիմնականում դասերն ունեն նմանատիպ կառուցվածք: Ցանկացած թեմայի սկզբում աշակերտները ծանոթանում են նոր բառերի և արտահայտությունների՝ Word Bank խորագրի ներքո, այնուհետև ամրապնդում այն տարբեր ընթերցանական (Reading Spot, It's a long Story), քերականական (Grammar Spot և Grammar Revision), բանավոր (Talking points) և գրավոր (Writing Spot) խոսքը զարգացնող, լսելու և ընկալելու, ինչպես նաև ճիշտ արտասանելու ունակությունները զարգացնող (Miss Mouth) վարժությունների միջոցով: Թեմաները կարող են ունենալ նաև ենթաթեմաներ, որոնք նշվում են տառերի միջոցով:

My personality and the way I dress
My interests. I like listening to music
Let's think green and be nature-wise
Talking about Present Past and Future
I Am a Fan of the Olympics
I Value the Importance of Inventions

MY PERSONALITY AND THE WAY I DRESS

Թեմայի բովանդակությունը տեղիք է տալիս աշակերտներին մտորելու մարդու արտաքին և ներքին ներդաշնակության, հնարավորություն և տալիս զրուցելու այսօրվա երիտասարդի կերպարի և հետաքրքրությունների մասին: Այս թեմայի նպատակն է աշակերտին ներկայացնել մարդու արտաքին տեսքը, բնավորությունը և հագնվելու ոճը նկարագրելու բառապաշար:

Քննարկում կազմակերպեք *Every one is special by being different* բնաբանի վերաբերյալ՝ ներգրավելով ամբողջ դասարանը: Նախապես մտածե՛ք և պատրաստե՛ք հարցեր, ինչպես, օրինակ. ինչով են մարդիկ տարբերվում միմյանցից. համեմատե՛ք ձեր նախասիրությունները, հագուկապը, վարվելաձևը և այլն: Ինչո՞վ են տարբերվում պատանիները մեծահասակներից և այլն:

Word Bank խորագրի ներքո ստուգեք յուրացրած բառապաշարը:

Բառապաշարը սովորեցնելու և զարգացնելու նպատակով հանձնարարե՛ք 1 -ին վարժության մեջ տրված ածականները դասակարգել ըստ բնավորության և արտաքին տվյալների, ինչպես նաև դրական և բացասական գծերի, իսկ 5-րդ վարժության ածականները դասակարգել ըստ բնավորության գծեր, արտաքին տեսք, և հագնվելու ոճ նկարագրող խմբերի: Թեմային առնչվող բառապաշարը զարգացրեք նաև տրված այլ տիպի վարժություններով, ինչպիսինն են *matching*, *multiple choice*, and *blank filling*:

Տրված նյութերը (հոդվածները, երկխոսությունները, վարժությունները) աշակերտին հնարավորություն են տալիս իրեն հուզող հարցերի շուրջ խորհելու և վիճաբանելու՝ *Style and Fashion, The history of fashion, Famous fashion designers, etc.*

Talking points հանձնարարության ներքո ծավալե՛ք քննարկում աշակերտների սիրած հագուստի և հագնվելու ոճի վերաբերյալ, օգտվելով ստորև առաջարկված հարցերից:

Sample questions

How often do you shop for clothes?

Do you spend a lot of time deciding what to wear every day?

Do you notice the clothes that your friends and acquaintances are wearing?

Do you notice the clothes of a person you are meeting for the first time?

How do you like to dress?

Do you like to wear the very latest fashions?

Do you like to dress comfortably?

What is your attitude toward clothes?

Do people dress too casually these days?

Do you judge others by the way they dress?

Do you like to look like everyone else?

What kind of person do you think you are?
 Which celebrity has the best sense of style?
 Are you interested in fashion?
 How do you know what is in fashion and what is out of fashion?
 Is fashion a kind of art?
 Have you ever been to a fashion show?
 If not, would you like to go to one? Why or why not?
 Do you think it is important to be in fashion?
 Do you think people feel different when they wear different clothes?
 What kind of clothes are in fashion now?
 What kind of clothes do you usually wear?
 Would you like to be a fashion model?
 Do you think that the clothes we wear reflect what is inside us ?
 What do you think of people who always and only wear black?
 What do you think of people with tattoos?
 What do you think of people with body piercing?
 Do you think there's a difference between " fashion " and "style" ?
 Do you think wearing uniforms is a good idea?
 What are the pros and cons of wearing uniforms?
 Are you a shopaholic?

Թեման ամփոփեք գրավոր աշխատանք հանձնարարելով: *Writing spot* խորագրի ներքո, հանձնարարեք գրել մի պարբերություն, որը նկարագրում է աշակերտի վերաբերմունքը հագուստին, ընտրելով չորսը տրված վերնագրերից այն մեկը, որը լավագույնս արտացոլում է նրա տեսակետը: Աշակերտների ուժադրությունը սևեռեք *make a statement* արտահայտության վրա և բացատրեք դրա նշանակությունը՝ ինքնարտահայտվել հագուստի միջոցով:

Ամփոփվում և ներմուծվում է նաև թեմային առնչվող քերականական նյութը՝ համակարգելով այնպես, որ աշակերտը հեշտությամբ կարողանա կիրառել քերականական տարբեր երևույթները բանավոր խոսքում:

Հիշեցրեք և ամփոփեք, կամ սովորեցրեք

the հոդի օգտագործումը այն գոյականների հետ, որոնք միակն են բնության մեջ և հանձնարարե՛ք անգիր սովորել տանը *He loves the ocean* բանաստեղծությունը և *It's a small world* երգը:

-ed-ով վերջացող հոյզեր կամ զգացողություններ նկարագրող ածականները, -ing-ով վերջացող ածականները որոնք նկարագրում են այն, ինչը առաջացնում է հոյզեր կամ զգացողություններ համեմատական և գերադրական մակբայների օգտագործումը ինչպես նաև *much* և *far* ուժեղացուցիչների օգտագործումը համեմատականների հետ

սովորեցրեք ուղիղ և անուղղակի խոսքի կիրառումը, որից հետո հանձնարարե՛ք *Mr. Wiggins paints the sitting-room* հումորային պատմությունը ամփոփել երրորդ դեմքով

MY INTERESTS. I LIKE LISTENING TO MUSIC

Երաժշտությունը, ինչպես նաև կարդալը, գրելը և խոսելը, արտահայտում է մտքեր, գաղափարներ և զգացմունքներ:

Երաժշտությունը կարևոր միջոց է մշակութային ժառանգության մասին տեղեկություն ստանալու և փոխանցելու համար: Երաժշտությունը համամարդկային լեզու է որն օգնում է տեղեկություն ստանալ ավանդույթների, մտածելակերպի ու գործելակերպի մասին:

Երաժշտությունը ինքնարտահայտվելու և ստեղծագործական ունակությունները զարգացնելու հնարավորություն է տալիս, սովորեցնում գնահատել որակը:

Word Bank խորագրի ներքո ընդլայնեք և ամրապնդեք գործիքներին և երաժշտության ոճերին առնչվող բառապաշարը և արտահայտությունները: Ուսանողների ուշադրությունը սևեռեք **listen** և **hear** բայերի տարբերության վրա, ինչպես նաև **in a loud voice** և **in a low voice** արտահայտությունների վրա:

Listening spot խորագրի ներքո տրված **Sound of Music**

երաժշտական ֆիլմից հատվածը բեմադրեք դերախաղի միջոցով:

Talking points հանձնարարության ներքո ծավալեք քննարկում տրված նյութերի (հոդվածների, երկխոսությունների, վարժությունների) շուրջ խորհելու և վիճաբանելու, օգտվելով ստորև առաջարկված հարցերից.

What are the different genres of music, and how do they differ from each other?

How has technology changed the way music is created, produced, and consumed?

Who are some of the most influential musicians of all time, and what makes their music so significant?

How has music impacted society throughout history, and how does it continue to do so today?

What are some of the most popular music festivals around the world, and what makes them unique?

What are some of the most popular instruments played today?

What are some of the most famous music collaborations, and what makes them successful?

What would life be without music?

What's the best time and place to listen to music?

What are three songs that get you excited?

Is there a song that makes you emotional?

How does listening to music affect your mood?

What are the benefits of playing an instrument?

Are there any instruments you would like to learn yourself?

Do you think music can be a form of self-expression?

What role does music play in your life?

What do you think about music education in school?

Do you think learning about music can help people better understand other cultures?

What do you think is the purpose of music?

What kind of music do you think is most popular with young people?

Do you think people's taste in music changes as they get older?

Do you think music can bring people together?

Is there any kind of music that you hate?

Do you think that animals can enjoy music? How do you know?

Do you think that music can help make world peace? How?

Writing spot խորագրի ներքո հանձնարարեք ուսանողներին գրել մի պարբերություն իրենց դասընկերների երաժշտական ճաշակի և սովորությունների մասին, նախապես հարցազրույց անցկացնելուց հետո: Ամփոփելով դասը՝ որպես տնային գրավոր աշխատանք՝ հանձնարարեք (*guided writing*) *Musical education* վերնագրով շարադրություն, հիմնվելով Հերլուֆ Բիդսրուպի հումորային գծանկարների վրա:

Դասարանում հանձնարարեք գրավոր նկարագրել սիրելի երաժշտական ժանրը, օգտագործելով տրված ածականները և սիրված երաժշտական ոճերը:

Օգտագործելով արտասահմանյան եվ հայկական հայտնի երաժիշտների մասին ինֆորմացիան հանձնարարեք ուսանողներին ներկայացնել իրենց սիրած արտասահմանյան եվ/կամ հայկական հայտնի երաժշտին:

Listening spot խորագրի ներքո հանձնարարեք լսել երաժշտության մասին գրույցը և գրի առնել դասական երաժշտության դրական արդյունքները:

Grammar spot խորագրի ներքո ամփոփվում և ներմուծվում է նաև թեմային առնչվող քերականական նյութը՝ համակարգելով այնպես, որ աշակերտը հեշտությամբ կարողանա կիրառել քերականական տարբեր երևույթները բանավոր խոսքում:

Կրավորական սեռի (*Passive Voice*) պարզ ներկա և անցյալ ժամանակների օգտագործումը:

Սովորեցրեք, որ կրավորական սեռը գործածվում է այն ժամանակ, երբ ավելի կարևորվում է գործողությունը, քան գործողություն կատարողը:

Ներկա վաղակալար (Present Perfect) ժամանակ, երբ այն ցույց է տալիս գործողություն, որը կատարվել է նախքան խոսելու պահը և խոսելու պահին այդ գործողության արդյունքը արկա է՝ հարկ եղած

դեպքում գործածելով *already, yet, never, ever, lately* մակբայները. Համեմատեք *Ներկա վաղակապար (Present Perfect)* ժամանակը *Անցյալ անորոշ (The Past Indefinite Tense)* ժամանակի հետ, ցույց տալով նրանց տարբերությունները:

Համեմատեք *Անցյալ անորոշ (The Past Indefinite Tense)* ժամանակը *Անցյալ շարունակական (Past Continuous)* ժամանակի հետ, ցույց տալով նրանց տարբերությունները, ինչպես նաև իրենց առնչվող *when* and *while* շաղկապները:

Listening spot խորագրի ներքո հանձնարարեք լսել մարդկանց, ովքեր խոսում են իրենց օրվա անելիքների և չարած գործերի մասին և պատասխանել տրված հարցերին:

Սովորեցրեք *ածական + նախադիր (adjective+preposition)* կառուցվածքը, նշելով, որ դրանք միմյանց հետ գործածելու քերականական կանոններ չկան, ուստի միակ ելքը փորձել հիշելն է:

Let's think green and be nature-wise

Այս դասի նպատակն է ձևավորել պատասխանատու վարքագիծ և հոգատար վերաբերմունք Երկիր մոլորակի նկատմամբ: Ընթացքում աշակերտները սովորում են բնապահպանությանը վերաբերող բառեր և արտահայտություններ:

Քննարկում կազմակերպեք *You don't know what you've got till it's gone* բնաբանի վերաբերյալ՝ ներգրավելով ամբողջ դասարանը: Նախապես մտածե՛ք և պատրաստե՛ք հարցեր, ինչպես, օրինակ.

What do people do to protect the environment?

How do people damage the environment?

Do people in Armenia protect the environment?

What can you do to protect the environment in Yerevan?

What can the government do to protect the environment?

Word Bank խորագրի ներքո ամրապնդեք բնապահպանության հետ առնչվող բառապաշարը և արտահայտությունները, *Listening spot, Reading spot, Talking points, and matching* վարժությունների՝ միջոցով:

Writing spot խորագրի ներքո հանձնարարեք ուսանողներին կազմել շրջակա միջավայրին օգնելու գործողությունների ցանկ՝ *How do you help the environment?* վերնագրով, նախապես անցնելով *How much can you do to help the planet?* թեստը:

Այնուհետև այդ թեմայի վերաբերյալ *Tropical Rainforests* հոդվածը կարդալուց հետո դասարանում կազմակերպե՛ք քննարկում հետևյալ խնդիրների շուրջ՝ ինչու՞ են վտանգված արևադարձային անտառները, կլիմայի փոփոխությունների ազդեցությունը մարդկային հասարակության վրա, բնապահպանական ինչպիսի խնդիրներ գոյություն ունեն և այլն:

Listening spot խորագրի ներքո լսեք հարցազրույցներ **The earth is our environment** վերնագրով և անցկացրեք բանավեճ՝ և *Talking points* հանձնարարության ներքո ծավալեք քննարկում այդ խնդիրների շուրջ: Լսեք և սովորեք Լուի Արմստրոնգի *What a Wonderful World* երգը և կարծիքներ փոխանակեք դրա վերաբերյալ աշակերտների հետ:

Writing spot խորագրի ներքո հանձնարարեք գրել մի պատմություն հենվելով Հերլուֆ Բիդսրուպի հումորային գծանկարների վրա ինչպես նաև կազմեք խորհուրդների ցանկ այն մարդկանց համար, ովքեր գնում են քաղաքից դուրս բնության գրկում ժամանակ անցկացնելու:

Reading spot խորագրի ներքո հանձնարարեք կարդալ *Wonders of the World Nature* տեղեկատվությունը, համապատասխանեցնել նկարներին և լրացնել աղյուսակը:

Grammar revision խորագրի ներքո ամփոփվում է անցած քերականական նյութը բազմակի ընտրության վարժությունների միջոցով:

Թեման նաև ընդգրկում է բազմաթիվ բառակազմական (wordbuilding) վարժություններ:

TALKING ABOUT PRESENT PAST FUTURE

Նախքան այս դասին անցնելը աշակերտներին հիշեցրեք անցյալ ժամանակների օգտագործումը, անդրադարձեք *Simple past* և *Simple Present* ժամանակների տարբերությանը, ուշադրություն դարձրեք *be going to do something* արտահայտությանը՝ գործողություն կատարելու մտադրության նշանակությամբ: Որպեսզի աշակերտներն ավելի լավ յուրացնեն այդ արտահայտությունը՝ հանձնարարեք նաև հայերենից թարգմանական վարժություններ, ինչպես նաև կատարեք դասագրքում տրված հայերեն և անգլերեն նախադասություններն իրար համապատասխանեցնելու վարժությունը, այնուհետև նրանց հարցեր ուղղեք՝ հետզհետե ամբողջ դասարանը ներգրավելով աշխույժ գրույցի մեջ: Կարող եք նաև հորինել և ավելացնել ձեր հարցերը:

Ներկայի մասին խոսելիս դասագրքի հեղինակն անդրադառնում է «Դպրոցը իմ ներկան է» թեմային: Այստեղ աշակերտները պետք է կարողանան պատմել, թե ինչպես են նրանք վերաբերվում իրենց դպրոցին, ուսուցիչներին, դպրոցական առարկաներին, պիտի կարողանան նկարագրել իրենց անցկացրած օրը տանը և դպրոցում, խոսել իրենց դպրոցական համազգեստի մասին և քննարկել դրա արդյունավետությունը, ինչպես նաև նկարագրեն իրենց առաջին օրը դպրոցում: Ենթադրվում է, որ աշակերտները պետք է արդեն կարողանան ազատ խոսել իրենց օրակարգի մասին, այն մասին, թե որ ժամին

ինչով են զբաղվում իրենք, իրենց հարազատները և այլն: Հանձնարարե՞ք անգիր սովորել *What did you learn in school today* բանաստեղծությունը:

Անցյալի մասին խոսելիս անդրադարձե՞ք անցյալի հետաքրքրաշարժ փաստերին, հանձնարարե՞ք կարդալ դինոզավրերի մասին տեքստը և հարցերի միջոցով պարզե՞ք, թե ինչ հետաքրքիր փաստեր կարող են աշակերտները բերել անցյալից:

It's a long story խորագրի ներքո տրված Վ. Սարոյանի *My new school of thought* պատմվածքից մի հատված հանձնարարե՞ք կարդալ՝ նախապես պարզելով, թե ինչ գիտեն հեղինակի և նրա ստեղծագործությունների մասին, կատարե՞ք դրան կից բոլոր վարժությունները և քննարկե՞ք այն: Զուգահեռ անցկացրե՞ք հին և նոր մտածելակերպի, անցյալի և այսօրվա դպրոցի միջև՝ հենվելով դասագրքում տրված վարժությունների կամ ձեր կազմած հարցերի վրա:

Նախքան տրված հարցերի օգնությամբ զրույցը սկսելը կրկնե՞ք ապառնի ժամանակը կազմելու ձևերն ու օգտագործման եղանակները: Նշե՞ք նաև, որ ապառնին կարելի է արտահայտել *Present Continuous* ժամանակի միջոցով: Աշակերտներին հիշեցրե՞ք, որ ժամանակ և պայման ցույց տվող ստորադասական նախադասություններում ապառնի ժամանակ չի օգտագործվում: Փորձե՞ք տրված հարցերի օգնությամբ կազմակերպել աշխույժ քննարկում՝ հետևելով, որպեսզի պատասխանները կառուցվեն ներկայացված կաղապարներով:

Համոզվե՞ք, որ աշակերտները հասկանում են *It's unlikely that, It's likely that* արտահայտությունների իմաստը:

Որպես քերականական նյութ՝ անդրադարձե՞ք մաթեմատիկական գործողությունների անգլերեն անվանումներին:

Կատարե՞ք հետևյալ աշխատանքը՝ առաջին աշակերտը “*If*”-ով մի նախադասություն է կազմում, երկրորդը շարունակում է նրա միտքը, այնուհետև նրանց է միանում երրորդ աշակերտը և այսպես շարունակ, մինչև պարտվելը, երբ այլևս ասելիք չկա:

Նախ ստուգե՞ք, թե աշակերտներն արդյոք ճիշտ են հասկացել բոլոր կանոնները և ապա, որպես գրավոր աշխատանք, հանձնարարե՞ք տանը կատարել քերականական վարժությունները:

Քննարկում կազմակերպե՞ք ապագայի մասին կանխագուշակումների վերաբերյալ՝ հետևելով, որպեսզի աշակերտներն օգտագործեն կարծիք արտահայտելու և իրենց կարծիքը հիմնավորելու համար անհրաժեշտ բառապաշարը: Որպես տնային գրավոր աշխատանք հանձնարարե՞ք նկարագրել իրենց երազած կամ պատկերացրած ապագայի տունը:

Listening վարժության շրջանակներում հանձնարարեք լսել Բրայեն Քարթերի հաղորդումը ԲիԲիՍի-ով և կատարել դասագրքում տրված վարժությունը: Հարցեր տվեք աշակերտներին՝ պարզելու համար, թե որքանով են նրանք հասկացել նյութի հումորը:

Տանը հանձնարարեք կարդալ ֆուտբոլի մեկնաբանությունը՝ ուշադրությունը կենտրոնացնելով արագ կարդալու և արտասանության վրա, այնպես, ինչպես դա անում են իսկական ֆուտբոլային մեկնաբանները:

Ամփոփելով դասը՝ հանձնարարեք կարդալ տրված կանխագուշակումները, քննարկեք դրանք դասարանում և հանձնարարեք տանը կատարել գրավոր համեմատության աշխատանք՝ ներկայի, անցյալի և ապագայի միջև, դասում տրված օրինակի հիման վրա:

I Am a Fan of the Olympics

Այս դասի ընթացքում աշակերտները սովորում են օլիմպիական մարզածների և խաղերի անվանումները և այն բայերը, որոնք օգտագործվում են դրանց մասին խոսելիս: Որպես տնային աշխատանք հանձնարարեք ըստ պարբերությունների դասակարգել *The Olympic Games* տեքստը, իսկ դասարանում քննարկում կազմակերպեք տեքստին տրված հարցերի օգնությամբ:

Աշակերտների ուշադրությունը սևեռեք *Paralympic Games* խաղերի անվանման վրա՝ որպես յուրահատուկ սպորտային մրցություն՝ որևէ արատ ունեցող մարդկանց մասնակցությամբ: Դասարանում քննարկում կազմակերպեք այնպես, որպեսզի աշակերտներն արտահայտեն իրենց դրական կամ բացասական վերաբերմունքը նման բնույթի մրցությունների վերաբերյալ: Գրեք չորս պարաօլիմպիկ արժեքները *courage, determination, inspiration, and equality* (քաջություն, վճռականություն, ոգեշնչում, և հավասարություն) գրատախտակի վրա:

Խոսեք այն մասին թե ինչպես են հաշմանդամություն ունեցող մարզիկները արտահայտում այս արժեքները, ձգտելով կատարելիության: Սովորողներին բաժանեք 4 - հոգանոց խմբերի և յուրաքանչյուր խմբին տվեք չորս պարաօլիմպիկ արժեքներից մեկը: Յուրաքանչյուր խումբ պետք է գրի թղթի վրա բառեր կամ գաղափարներ իրենց մոտ եղած պարաօլիմպիկ արժեքի վերաբերյալ, ապա մտքեր փոխանակի դասարանի հետ:

courage

inspiration

Paralympic Values

determination

equality

Դասարանի հետ կիսվեք պարաօլիմպիկ արժեքների մասին ձեր հասկացողությամբ: Օգնեք սովորողներին սահմանել արժեքները՝ օգտագործելով բառերը, որոնք նրանք հասկանում են և պարբերաբար օգտագործում: Օրինակ՝ սովորողները կարող են օգտագործել *brave* բառը՝ *courage* արժեքը նկարագրելու համար, որը սահմանվում է որպես «ինչ-որ մեկը, ով փորձում է անել մի բան, որը մյուսները կարող են պատրաստ չլինել փորձել կամ կարծում են, որ հնարավոր չէ»: Խնդրեք սովորողներին ներկայացնել օրինակներ, երբ նրանք կամ նրանց ծանոթ մեկը ցույց է տվել արժեքներից մեկը:

Talking points հանձնարարության ներքո ծավալվեք քննարկում պարաօլիմպիկ արժեքների (*Paralympic Values*) վերաբերյալ, օգտվելով ստորև առաջարկված հարցերից:

The Paralympic Games. What are they?

Para sports. What are they and how are they played?

Which value is the most challenging for you?

How do Paralympic athletes demonstrate the values to us?

Can you think of any stories where characters from books or films, show the Paralympic values?

Writing spot Խորագրի ներքո հանձնարարեք գրել մի պատմություն *Training for the Championship* վերնագրով, հենվելով Հերլոֆ Բիդսրուպի հումորային գծանկարների վրա, ինչպես նաև հանձնարարեք հայտնի հայ գեղարվեստական մարմնամարզիկ Ալբերտ Ազարյանի մասին ինքնակենսագրություն (CV) գրել, նախապես ծանոթացնելով CV գրելու կառուցվածքին: Հանձնարարեք նաև գրել պարաօլիմպիական արժեքներ վերնագրով (*Paralympic Values*) պարբերություն:

Grammar spot Խորագրի ներքո ամփոփվում և ներմուծվում է նաև թեմային առնչվող քերականական նյութը՝ համակարգելով այնպես, որ աշակերտը հեշտությամբ կարողանա կիրառել քերականական տարբեր երևույթները բանավոր խոսքում:

Մոդալ բայեր (Modal Verbs)

can մոդալ բայը՝ թույլտվության և հավանականության իմաստներով

may մոդալ բայը՝ թույլ հավանականության իմաստով

must մոդալ բայը՝ ուժեղ հավանականության իմաստով

should մոդալ բայը ինչ-որ մեկին խորհուրդ տալու, նրա օգուտի համար. *ought to* մոդալ բայը՝ «հարկ է որ» թարգմանությամբ, երբ խոսողն ուզում է ինչ-որ մեկին բարոյական խրատ տալ հանուն համակեցության մարդկային նորմերի և խղճի.

I Value the Importance of Inventions

Գյուտերը ազդում են ժամանակակից գոյության բոլոր ասպեկտների վրա: Ինչպես են մարդիկ շփվում, աշխատում, ուտում, ճանապարհորդում, գնումներ կատարում՝ այս ամենը ենթակա է նորարարության և գյուտի: Պատմության ընթացքում մարդիկ միշտ հորինել և ստեղծել են նոր բաներ՝ իրենց կյանքը բարելավելու համար: Անիվից մինչև սմարթֆոն՝ նոր գյուտերը փոխել են մեր ապրելակերպը, աշխատելու ոճը և միմյանց հետ փոխհարաբերությունները:

Word Bank Խորագրի ներքո ընդլայնեք և ամրապնդեք նորարարությանը և գյուտին առնչվող բառապաշարը և արտահայտությունները, դասում տրված վարժությունների միջոցով:

Talking points հանձնարարության ներքո ծավալեք քննարկում գյուտերի կարևորության վերաբերյալ, օգտվելով դասում տրված համաշխարհային և հայկական գյուտերի և գյուտարարների մասին տրված տեղեկություններից, ինչպես նաև ստորև առաջարկված հարցերից:

What are the best and the most useful inventions of the mankind in the 20th and 21st centuries?

What famous inventors do you know? What were their inventions?

Do you know anything about the inventions of Leonardo da Vinci?

Do you think you can live without your mobile or is it now an important part of your daily life?

What do you think is the worst invention of the mankind? (weapon, atomic energy, cigarettes, television, mobile phones, cars, genetically modified products etc)

What would you invent if you were a scientist?

What is the greatest invention ever?

Who is the world's greatest ever inventor?

What does *necessity is the mother of invention* mean? Do you agree with it?

How was the world different before the wheel was invented?

Do you think the person who invented the atomic bomb was happy with his discovery?

What invention is needed to save the world from global warming?

Do you know the history of any invention? What do you know about it?

Reading spot խորագրի ներքո հանձնարարեք կարդալ համաշխարհային և հայկական գյուտերի և գյուտարարների մասին տրված տեղեկատվությունը, համապատասխանեցնել նկարներին և լրացնել աղյուսակը: Հանձնարարեք կարդալ *The Value of Dreams* հոդվածը և գրել պարբերություն, ընտրելով այն վերնագիրը, որը լավագույնս արտացոլում է ձեր տեսակետը:

Grammar spot խորագրի ներքո սովորեցրեք *Future Continuous (Progressive)* ժամանակաձևը:

Grammar revision խորագրի ներքո ամփոփեք անցած քերականական նյութը բազմակի ընտրության վարժությունների միջոցով:

SUPPLEMENTARY TEXTS FOR READING AND DISCUSSION

The Human Comedy

by William Saroyan

The ancient history classroom was swiftly filling as the teacher, old Miss Hicks, waited for the final bell.

“Now”, she said, “we will take up the Assyrians where we left off yesterday. First we will read from our ancient history text-book. Then we will have an oral discussion of what we have read”.

“Now”, she said, “turn to page 117, paragraph two”.

Everyone turned to the page and found the place.

“Ancient history”, the teacher continued, “may seem to be a dull and unnecessary study. Such a notion, however, is incorrect. It is very important for us to know of other times, other cultures, other peoples, and other worlds. Who’ll volunteer to come to the head of the class and read?”

Of the two girls who had volunteered the teacher selected Helen Eliot, the beautiful and snobbish.

“The Assyrians”, Helen Eliot read, “long of nose, hair and beard, developed Nineveh in the North to a position of great power...”

